| 4.ՎԴ 6/0698/05/13 |
|---|
| *Վարչական դատական մշտադիտարկված գործերի քննությունը*<br>*ձգձգելու օբյեկտիվ պատճառները* |
| Գործով առաջին դատական նիստի՝ 28.12.2014թ նշանակումը հայցի վարույթի ընդունումից՝ 28.12.2013թ-ից հետո՝ 2 ամիս անց նշանակելը օբյեկտիվ պատճառներից կարող է լինել, քանի որ գործող օրենքի համաձայն[1]՝ հայցը վարույթ ընդունելու որոշում կայացնելուց հետո՝ եռօրյա ժամկետում, վարչական դատարանն պետք է այդ որոշումը, հայցադիմումի և կից փաստաթղթերի պատճենները ուղարկի դատավարության մասնակիցներին:<br><br>Կրկին նույն օրենքի համաձայն[2] միաժամանակ երկշաբաթյա ժամկետ է տրվում Պատասխանողին վարչական դատարան ուղարկել հայցադիմումի պատասխանը, որի ստանալուց հետո դատարանը գործող օրենքի համաձայն[3] կարող է հրավիրել նախնական դատական նիստ, հետևաբար այս դատավարական համալիր գործողությունների իրականացումը, այդ թվում դատարանի կողմից դատական նիստից առաջ ծանուցումն ապահովելու անհրաժեշտությամբ պայմանավորված առաջին նախնական դատական նիստի նշանակումը երկու ամիս անց օբյեկտիվ պատճառներով է պայմանավորված: |
| *Վարչական դատական մշտադիտարկված գործերի քննությունը*<br>*ձգձգելու սուբյեկտիվ պատճառները* |
| Սույն գործով դատարանը նշանակել է 16 դատական նիստ, որից 15 դատական նիստերը դատաքննության փուլ են եղել, որից 2-ը չեն կայացել Դատավորի արձակուրդում գտնվելու և վերապատրաստման դասընթացին մասնակցելու հիմքով, արդյունքում 13 դատական նիստերը եղել են դատաքննության փուլում, այն ինչ գործող օրենքի համաձայն[4]՝ դատաքննությունը, որպես կանոն, պետք է ավարտվի մեկ դատական նիստով՝ առանց հետաձգումների:<br><br>Այս դեպքում չի կարող օրինաչափություն համարվել 13 դատաքննություն նշանակելը գործով, երբ օրենդիրը որպես կանոն նախատեսել է մեկ դատական նիստով ավարտ:<br><br>Տեսականորեն, եթե այդ 13 դատաքննություններից մի մասը համարենք նշանակված ծանուցումների կամ այլ պատճառներով, այուհանդերձ 13/1 հարաբերակցությունը արդարացված չէ: |

[1] ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք 78-րդ հոդված կետ 5
[2] ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք 86-րդ հոդված կետ 1
[3] ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք 89-րդ հոդված կետ 1
[4] ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք 84-րդ հոդված կետ 2

Արդարացված չէ նաև այն պատճառով նաև, որ գործով կայացված դատական ակտի ուսումնասիրությունից հետևում է, որ դատավարական հակառակորդ կողմը՝ Մեծ Պարնի Գյուղապետարանի ներկայացուցիչ՝ Հրայր Յաղուբյանը դատական նիստում չի առարկել հայցի դեմ, ՀՀ վարչական դատարանին հայտնել է, որ հայցվորի ընտանիքը բազմանդամ է, բնակվում են վագոն-տնակում, չի ժխտում, որ նրանք երկրաշարժի ժամանակ տուն են ունեցել, սակայն այն չգված չէ արխիվային տեղեկանքում, նախկին հերթացուցակում ընդգրկված են եղել, հաշվառումից հանվել են Կարգի 6-րդ կետի համաձայն (տես դատական ակտում):

Վերոգրյալի համատեքստում ակնհայտ է, որ դատավարական «պայքար», խոչընդոտներ չեն եղել, ինչն արդեն իսկ լրացուցիչ հիմքեր չի առաջացրել դատավարությունը երկարաձգելու, ապացույցներ պահանջելու, պրոցեսները երակարաձգելու համար, գործով բացառապես ենթակա են եղել պարզաբանման միայն իրավունքի հարցեր, արդյոք Հայցվորին և ընտանիքի անդամներին պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային ապահովման ծրագրերի շրջանակներում բնակարանային պայմանները բարելավելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակի հաշվառումից հանելուն ուղղված համայնքի ղեկավարի գործողությունը իրավաչափ է, թե ոչ:

Արդյունքում գործի համար պարզաբանման են եղել միայն իրավունքի հարցեր, որոնք էլ դատարանը պետք է ուսումնասիրի որոշմամբ անդրադառնար, հետևաբար 5 տարի դատաքննությունը առդարացված չէ և ինքնին հանգեցրել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 84-րդ հոդվածի խախտմանը, այն է գործը դատաքննության նախապատրաստելը և բուն դատաքննությունը պետք է իրականացվեն ողջամիտ ժամկետներում, բացառությամբ այն դեպքերի, երբ առանձին գործերի քննության և լուծման համար սույն օրենսգրքով սահմանված են որոշակի ժամկետներ: Այս գործով բացակայել է առանձին գործի համար նախատեսված գործի քննության որոշակի ժամկետների հիմքը, հետևաբար պետք է գործեր ընդհանուր ողջամիտ ժամկետների ընդհանուր կանոնը:

Ավելին, երբ Պատասխանող կողմը չի առարկել հայցի դեմ, դատարանը պետք է օգտվեր վարչական դատավարության օրենսգրքի 119-րդ հոդվածի հիմքերից՝ կիրառելու արագացված դատաքննություն և 121-րդ հոդվածի համաձայն կիրառեր 121-րդ հոդվածը, այն է՝ 119-րդ հոդվածով սահմանված հիմքերի առկայության դեպքում դատարանն անհապաղ անցնում է գործն ուստ էության լուծող դատական ակտ կայացնելուն, քանի որ ոչ միայն հայցն ակնհայտ հիմնավոր է եղել, այլև Պատասխանող կողմն չի առարկել հայցի դեմ:

Գործի քննության հետաձգումները և 5 տարի դատավարություններում, դատարանը հաշվի չի առել, որ պաշտպանության դիմած անձիք խոցելի են, որպես անօթևան, երկրաշարժից տուժած, բնակարան կորցրած, վագոնում բնակվող և 12 անձից բաղկացած ընտանիքն է դիմել դատական պաշտպանության և անձիք դատական պաշտպանության դիմելիս ակնկալել են բնակարանի, կեցության հարցի լուծում և անկախ

ապագայում կայացվող դատական ակտից, դատարանը պետք է առանձնահատկություն կիրառի նմանատիպ վարույթներով, որով կաշկանդված չէ օրենքով,քանի որ հայցվորները,որպես անօթևան անձիք բարձրացրել են կեցության,ապրելու վայրի հարցը,որի լուծումը ողջամիտժամկետում,դատարանի կողմից տրվող գնահատականը կարող է որոշակիություն մտցնել դատական պաշտպանություն հայցող անձանց համար, որ եթե հայցը բավարարվում է, ապա անձինք չեն կրի դրսում հայտնվելու արդյունքում վնասներ՝ բարոյահոգեբանական, ֆիզիկական, առողջական, իսկ եթե դատարանը մերժում է պահանջը,ապագոնե որոշակի կարող են լինել ընտանիքի համար և վերջիններս ձեռնարկեն հնարավոր բոլոր քայլերը՝ իրենց բնակարանով ապահովելու համար և ոչ սպասեն 5տարի,սաել այն դեպքում, երբ կոնկրետ այս գործով չի բողոքարկել Պատասխանող կողմը, այլապես հակառակ պարագայում այն կհատերնվազագույնը 10տարի սահմանագիծը:

Դատական պաշտպանությունը պետք է լինի անձի համար նաև արդյունավետ և բարենպաստ դատական ակտի կայացումը չպետք է ապահովի միայն տեսական պահանջի բավարարում, այլ գործնականում ծառայի իրավիճակի լուծմանը, դատարանի առջև բարձրացված հարցին:

Ուշագրավ է, որ դատարանի կողմից նշանակված երկու դատավարական նիստեր չի կայացել դատավորի վերապատրաստման դասընթացին մասնակցելու և դատավորի արձակուրդում գտնվելու պատճառովներով:

Նախ պետք է արձանագրել, որ և վերապատրաստման դասընթացների առկայությանը և տրամադրվող արձակուրդի հաստատմանը տիրապետում են դատավորները դեռևս տարեսկզբին, բացառապես անհետաձգելի իրավիճակների դեպքում (օրինակ իր հաշվին արձակուրդ վերցնելը)հետապես դատական նիստերի հետաձգումը մի իրավիճակով պայմանավորված, որպիսի հանգամանքին դատավորները տիրապետում են նախապես, ուստի գործի քննության հետաձգումները պայմանավորված դատավորի արձակուրդների կամ վերապատատրաստման դասընթացներով օբյեկտիվ պատճառներ չեն կարող լինել (մանրամասը ներկայացված է Եզրակացության մեջ):

**29.09.2015թ** դատական նիստը դատավորը նշանակել է դեռևս **08.05.2015թ** վականին, այն ժամանակահատվածում, երբ արդեն իսկ վերապատրաստման դասընթացի ցանկին և իր կողմից այդ դասընթացներին մասնակցելու ժամանակացույցին տիրապետում էր:

Անդրադառնալով մեկ այլ՝ **27.06.2019թ** դատական նիստի հետաձգումը դատավորի արձակուրդի գտնվելու հիմքով, գտնում ենք,որ սա առաջին հայացքից թվում է ,թե օբյեկտիվ պատճառ է գործի քննության,մինչդեռ եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ յուրաքանչյուր դատավոր իր արձակուրդների վերաբերյալ հաստատումն է դեռևս տարեսկզբին է ուղղարկում, հետևաբար վերջինս նախապես իմանալով իր տվյալ օրը արձակուրդի մեջ գտնվելու փաստը,չի

կարող այդ օրն նշանակել դատական նիստ:
Մասնավորապես դատավորի արձակուրդի կանոնակարգման, տրամադրման և ժամկետների մասով կարգավորում է ՀՀ դատական օրենսգիրք Սահմանադրական օրենքի 58-րդ հոդվածով: Նշված հոդվածի առկայությամբ օրենսդիրը հստակ ձևակերպել է, որ դատավորի ամենամյա արձակուրդը պետք է տրամադրվի այնպես, որ չխոչընդոտվի դատարանի բնականոն գործունեության իրականացումը, ինչից ակնհայտ է, որ դատավորի արձակուրդի հիմքով գործի քննության հետաձգմամբ խախտվում են դատավարության մասնակիցների իրավունքները, խոչընդոտվում են դատարանի բնականոն գործունեության իրականացումը, ինչն էլ ըստ էության օրենսդիրը արձանագրել է օրենքով մեջբերում օրենքից՝
ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենք 58-րդ հոդված՝

**<u>2.Դատավորին ամենամյա հերթական արձակուրդը պետք է տրամադրվի այնպես,որ չխոչընդոտվի դատարանի բնականոն գործունեության իրականացումը:</u>**

Ըստ էության Օրենսդիրը նաև «խուսափելով» այդ հիմքը որպես գործի քննության հետաձգման օբյեկտիվ հիմք տալու որակումներից, նույն հոդվածով տվել է կարգավորում արձակուրդի տրամադրման ժամկետների վերաբերյալ հստակ արձանագրելով դատավորի արձակուրդի հաստատման ժամանակահատվածը, որից հետևում է, որ յուրաքանչյուր դատավորի արձակուրդի ժամկետները մինչև տվյալ տարվա հունվարի 31-ը հաստատվում են դատարանի նախագահի կողմից, ավելին միևնույն ժամանակում հրապարակվում դատական իշխանության կայք էջում., ինչից ակնհայտ է, որ դատավորի համար նախապես արդեն իսկ տարվա սկզբում հայտնի են դառնում այն օրերը,որոնց ժամանակ գտնվելու է արձակուրդի մեջ և այս գործով արդեն իսկ տարվա կեսին 27.06.2019թ դատական նիստ նշանակելը և այդ օրը հետաձգելն գործի քննության հետաձգման իրավաչափ հիմք չէ, օրենքով նախատեսված չէ, օրենքից մեջբերում՝
ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենք 58-րդ հոդված՝

**<u>9.Դատավորին արձակուրդ տրամադրելու կարգը սահմանվում է Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ:</u>**

Արդյունքում այս գործով դատարանը 2013թվականին հարուցված վարույթը ավարտելով 2019թվականին, շուրջ 5 տարի իրականացնելով քննություն,այնդեպքում

- Երբ իսկզբանե պատասխանողն չի առակել հայցիդեմ
- Երբ դատարանի կողմից պարզման ենթակա է եղել միայն իրավունքի հարցեր
- Երբ ապացույցներ պահանջելու անհրաժեշտություն չի եղել
- Երբ պաշտպանություն հայցող անձիք խոցելի են եղել /անօթևան/
- Երբ վեճի առարկան անձանց կեցության հարցն է եղել
- Երբ դատական ակտը նույնիսկ չի բողոքարկվել

Արդեն իսկ հաստատում են դատարանի կողմից գործի քննության անհիմն սուբյեկտիվ պատճառներով ձգձգման մասին, անարդյունավետ պաշտպանությունն ապահովելու մասին: